ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«22» «հուլիսի» 2024 թ. № 291-Լ

«ՀԱՅԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ՎԱՆԱՁՈՐԻ ԱՆՏԱՌՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՏԱՏԵՂ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N897-Ն որոշման հավելվածի 4-րդ կետով և 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N1072-Ն որոշման հավելվածի 7-րդ կետով, ինչպես նաև հաշվի առնելով շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրենի 2024 թվականի հուլիսի 15-ի N Ն/31.1/8732 զեկուցագրով ներկայացված նյութերը (լրացված հատատեղի հաշվեգնահատման ցուցակը և հատատեղի անձնագիրը, քարտեզ-սխեման) կապված Հայաստանում ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանում անտառների դիմակայունության բարձրացում՝ մեղմացման միջոցառումների շնորհիվ հարմարեցման և գյուղական վայրերում կանաչ տարածությունների ընդլայնման միջոցով» ծրագրի կատարման ապահովման հետ.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Վանաձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառներում 2024 թվականին լրացուցիչ հատատեղը՝ համաձայն հավելվածի:

2. Շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ս. Մարկոսյանին՝ սահմանված կարգով, անտառկառավարման պլաններին համապատասխան ապահովել «Վանաձորի անտառտնտեսություն»

մասնաճյուղերում հատատեղերի հատկացման, բնափայտի մթերման և իրացման աշխատանքների իրականացումը:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Ա. Մեյմարյանին:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

7/22/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«22» հուլիսի 2024թ.

ք. Երևան

Հավելված
շրջակա միջավայրի նախարարի
2024թ. հոկտեմբեր «22» -ի N291 - Լ հրամանի

Լրացուցիչ հատատեղ «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Վանաձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի

հ/հ	«Անտառտնտեսություն մասնաճյուղի» անվանումը	Ընդհանուր ծավալը, խմ	որից շինափայտ,խմ	Այդ թվում ըստ հատման տեսակների					
				Խնամքի		Սանիտարական		Անտառվերականգնման	
				Ընդհանուր ծավալը, խմ	որից շինափայտ, խմ	Ընդհանուր ծավալը, խմ	որից շինափայտ, խմ	Ընդհանուր ծավալը, խմ	որից շինափայտ, խմ
1	Վանաձորի	14,49	0.00	14,49	0.00	0.00	0.00	0.00	0.00
Ընդամենը		14,49	0.00	14,49	0.00	0.00	0.00	0.00	0.00